

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 2**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*խմբագրական խորհուրդ՝*

**Արման Եղիազարյան** (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Арман Егиазарян** (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Arman Yeghiazaryan** (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**СОДЕРЖАНИЕ / CONTENT**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY**

<b>Սեյրան Չաքարյան</b> - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
<b>Сейран Закарян</b> - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
<b>Seyran Zakaryan</b> - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
<b>Հասմիկ Ամիրջանյան</b> - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
<b>Асмик Амирджанян</b> - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
<b>Hasmik Amirjanyan</b> - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
<b>Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան</b> - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
<b>Вардан Мхитарян, Гоар Гамбарян</b> - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
<b>Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan</b> - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
<b>Լիլիթ Մակարյան</b> - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
<b>Лилит Макарян</b> - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
<b>Lilit Makaryan</b> - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
<b>Ֆելիքս Մովսիսյան</b> - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
<b>Феликс Мовсисян</b> - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
<b>Felix Movsisyan</b> - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
<b>Սուսաննա Առաքելյան</b> - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

<b>Сусанна Аракелян</b> – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896. ....	87
<b>Susanna Arakelyan</b> – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896. ....	87
<b>Գեղամ Բաղայան</b> – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
<b>Гегам Бадалян</b> – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды). ....	115
<b>Gegham Badalyan</b> – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir). ....	115
<b>Աննա Վարդանյան</b> – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ .....	117
<b>Анна Варданян</b> – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ. ....	123
<b>Anna Vardanyan</b> – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS. ....	124
<b>Գայանե Հովհաննիսյան</b> – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ .....	125
<b>Гаяне Оганнисян</b> – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г. ....	132
<b>Gayane Hovhannisyan</b> – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926). ....	133
<b>Արտակ Խաչատրյան</b> – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
<b>Артак Хачатрян</b> – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
<b>Artak Khachatryan</b> – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917). ....	141
<b>Մանյակ Երանոսյան</b> – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ) .....	142
<b>Маняк Ераносян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
<b>Manyak Yeranosyan</b> – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER). ....	150

<b>Գևորգ Կեսոյան</b> – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
<b>Геворг Кесоян</b> – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
<b>Gevorg Kesoyan</b> – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
<b>Արման Սաֆարյան</b> – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
<b>Арман Сафарян</b> – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
<b>Arman Safaryan</b> – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
<b>Սարգիս Սկրտչեան</b> – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
<b>Саргис Мкртчян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
<b>Sargis Mkrtchian</b> – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
<b>Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան</b> – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՐՏԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
<b>Мери Наджарян, Рипсима Мурадян</b> – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
<b>Meri Najaryan, Hripsime Muradyan</b> – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
<b>ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY</b>	
<b>Գևորգ Եաղարյան</b> – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
<b>Геворг Тшагарян</b> – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
<b>Gevorg Tshagharian</b> – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
<b>Լիզա Քարիմյան</b> – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
<b>Лиза Каримян</b> – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

*Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE.* ..... 217

**ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.)** ..... 218

**Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.)** ..... 222

**Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS).** ..... 223

**Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ)** ..... 228

**Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.)** ..... 235

**Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY).** ..... 235

**ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

**Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ** ..... 237

**Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА.** ..... 247

**Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS.** ..... 248

**Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ.** ..... 249

**Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США.** ..... 257

**Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA.** ..... 257

**Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ** ..... 259

**Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА.** ..... 272

**Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY.** ..... 273

**Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ** ..... 274

**Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА.** ..... 280

**Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN.** ..... 281

**ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY**

**Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)**..... 282

**Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ.** ..... 289

**Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN.** ..... 289

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW**

**Էրիկ Գալեգիսի Միլապեան, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 Էջ + 16 Էջ ՆԵՐՂԻՐ:**..... 291

**ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** ..... 293

**ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 Էջ:**..... 295

**ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ** ..... 298

**ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ** ..... 315

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 318

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 320

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 322

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 322

## Լիլիթ Մակարյան

### ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՉ

*Հիմնաբառեր. Խոյ, բռնագաղթ, Վարդենիս, Ս. Հակոբ, Ս. Աստվածածին, մարդահամար, Տեր Հովհաննես Տեր-Մինասյան:*

16-17-րդ դդ. Հայաստանը վերածվել էր Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև ընթացող պատերազմների թատերաբեմի: Անընդմեջ շարունակվող պատերազմներն իրենց ծանր հետևանքը թողեցին ինչպես Հայաստանի տնտեսության, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառների վրա: Նպաստեցին ժողովրդագրական պատկերի փոփոխությանը: Հայ բնակչության թվաքանակի կրճատմանը զուգընթաց ավելանում էին մահմեդական գանգվածները: Հայաստանի ու հայ ժողովրդի համար քայքայիչ հետևանքներ ունեցան հատկապես Շահ Աբաս Ա-ի հրամանով 1604-1605 թթ. կազմակերպված բռնագաղթերը, երբ Հայաստանի բազմաթիվ բնակավայրերից հայ բնակչությունը բռնի տեղահանվեց և բռնաբերվեց Պարսկաստան: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ հայության տեղահանումն ու բռնագաղթը տեղի է ունեցել հետևյալ կերպ. «... սկսեալ ի սահմանացն Նախչուանու և անցեալ ընդ Եղեգածոր, առ եգերբ Գեղամայ, և Լոռույն, և գՀամգաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զՁարիշատ, և մասն ինչ ի գեղորեիցն Կարսայ, և զծորն Կաղզվանու բնաւին, և բովանդակ գերկիրն Ալաշկերտու, և զգեղորայսն Մակուայ, և գերկիրն Աղբակու և զՍալմաստու և գխոյայ և գՈրմի, և որ ինչ պանդուխտք և դարիպականք մնացեալքն էին ի քաղաքն և ի գեղորայսն Թավրիզու, զղաշտն Արարատու բովանդակ և գերևան քաղաք, գերկիրն Ղրբուվաղայ, զԾաղկունուց ձոր, զԳառնու ձոր, զՈւրծածորն: Եւ յառաջմբան գայս՝ զգաւառն Կարնոյ, և զԲասենու, և զԻսնուսայ, և զՄանազկերտու, և զԱրծկեոյ, և զԱրճոյ, և զԲերկրու, և զՎանայ աւարով և գերութեամբ բերեալ էին յԵրևան, և ընդ սոսա բշեցին և տարան: Արդ՝ գայս ամենայն գավառքս՝ և որք ընդ սոքօք էին, հրամայեաց շահն, որ բշեցին և տարան յաշխարհն Պարսից, և արար աներակ և անմարդաբնակ գվայելուչ աշխարհս Հայոց»<sup>1</sup>:

Փաստորեն, սկզբում Կարինի, Բասենի, Իսնուսի, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի, Բերկրիի, Վանի գավառների հայ բնակչությունը տեղափոխվել է Արևելյան Հայաստան՝ Երևան, իսկ այնուհետև, արևելահայության հետ միասին, բռնագաղթեցվել: Այդպիսով՝ Շահ Աբասի կողմից իրականացված բռնագաղթի հետևանքով Արևելյան Հայաստանը զգալիորեն հայաթափվեց: Բռնագաղթվածների թիվը գերազանցում էր 350 հազարը<sup>2</sup>:

Օսմանյան կայսրությունում սկսված ջալալիների շարժումը ևս մեծ աղետ դարձավ հայ բնակչության համար: Ջալալիների հարձակումից ավերվեցին հատկապես Կարբիի և շրջակա գավառները, Հովհանսավանքը, Ուշականը: Մասնավորապես, այդ կապակցությամբ Առաքել Դավրիժեցին նշում է. «Եւ այսպես արարին գամենայն շրջակայ զգիւղս և զգաւառս Կարփու: ՉԱպարանու երկիրն, զՂրիսբուվաղայ երկիրն, զԾաղկունաց ձորի երկիրն, զԳառնույ ձորն, զՈւրծայ ձորն և յայնկոյս գետոյն Երասխայ՝ զՍահաթայ երկիրն՝ զԿողբ և զԱղջաղալէն»<sup>3</sup><sup>4</sup>:

\* Հոդվածը ներկայացվել է 29.11.2020 թ., հրատարակության երաշխավորվել՝ ՀԱԿՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Համո Սուբիասյանի կողմից (05.12.2020 թ.), ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

<sup>1</sup> Տե՛ս Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմութեանց, աշխատասիր.՝ Լ. Խանյարյանի, Ե., 1990, էջ 86-87:*

<sup>2</sup> Տե՛ս Հակոբյան Թ., *Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Ե., 1960, էջ 383:*

<sup>3</sup> Հին Երվանդակերտ (տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 77):

<sup>4</sup> Առաքել Դավրիժեցի, *նշվ. աշխ., էջ 104:*



Ինչպես արդեն նշել ենք, Ա. Դավրիժեցու հաղորդմամբ՝ ամայացել էր նաև ներկայիս Ապարանի տարածաշրջանը: Ապարանի Վարդենիս գյուղը<sup>1</sup> (նախկին անվանումը՝ Աղբյուրակ<sup>2</sup>, պարսկական և ռուսական տիրապետության շրջանում կոչվել է Գյուլլուջա, իսկ Չայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1946 թ. հուլիսի 15-ի հրամանագրով վերանվանվել է Վարդենիս<sup>3</sup>) վերաբնակեցվել է 1828 թ. փետրվարի 10 (22)-ին Թուրքմենչայում կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագրի արդյունքում: Թուրքմենչայի պայմանագրի երրորդ և չորրորդ հոդվածների համաձայն Արևելյան Չայաստանն անցնում էր Ռուսական կայսրության ենթակայության տակ, իսկ տասնչորսերորդ հոդվածը վերաբերում էր հայերի վերաբնակեցմանը<sup>4</sup>: Խոյը, ինչպես նաև մի շարք պատմական հայկական տարածքներ, թեև ռուսական զորքերը գրավել էին 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, Թուրքմենչայի պայմանագրով վերադարձվում էին Պարսկաստանին: Խոյի գավառը համապատասխանում է պատմական Պարսկահայք նահանգի Չեր գավառին: Խոյ (Չեր) քաղաքը գտնվում է Ուրիմիա լճից հյուսիս, Կոտուր գետի միջին հոսանքի ձախ կողմում: Մինչև 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին հաջորդած գաղթը, Խոյ քաղաքի և համանուն գավառի բնակչության մեծամասնությունը կազմել են հայերը: Այդ ժամանակ քաղաքն ուներ 4000 տուն բնակիչ: Իսկ արդեն 19-րդ դ. վերջերին (Թուրքմենչայի պայմանագրի համաձայն՝ գաղթից հետո - Լ.Մ.) Խոյ գավառը ուներ 8 հայաբնակ գյուղ՝ 308 տնտեսություններով և 1836 բնակիչներով: Գավառն ուներ 8 եկեղեցի և մեկ վարժարան: 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. սկզբներին այստեղի հայ բնակչությունը 115 տուն էր՝ որոնք ապրում էին քաղաքի բերդից դուրս<sup>5</sup>: Խոյում էր գտնվում նշանավոր Ս. Սարգիս եկեղեցին, որի կառուցման վերաբերյալ տարբեր թվականներ են հիշատակվում. մի դեպքում նշվում է, որ կառուցվել է 10-րդ դարում<sup>6</sup>, մեկ այլ դեպքում՝ 1120 թ.<sup>7</sup>:

1828-1829 թթ. հայերը Խոյից գանգվածային կերպով տեղափոխվեցին Արևելյան Չայաստանի՝ Ռուսաստանի ենթակայությանն անցած տարածք<sup>8</sup>: Դրան հաջորդեց ռուսական իշխանությունների հրահանգով հայերի հաշվառումը: 1831 թ. Սանկտ Պետերբուրգի համալսարանի պատմաբան Իվան Շոպենի կողմից Արևելյան Չայաստանում անցկացված առաջին մարդահամարից տեղեկանում ենք, որ Գյուլլուջա գյուղը վերաբնակեցվել է հիմնականում խոյեցիներով (36 ընտանիք՝ 95 տղամարդ, 97 կին, ընդհամենը՝ 192 մարդ), բայազետցիներով (9 ընտանիք) և մշեցիներով (1 ընտանիք՝ 28 տղամարդ, 28 կին, ընդամենը՝ 56 մարդ): Ընդհանուր առմամբ, այդ ժամանակ գյուղում վերաբնակեցվել էր 46 ընտանիք՝ 248 մարդ, որից 123 տղամարդ և 125 կին<sup>9</sup>: Գյուլլուջայում հաստատված հայ բնակչությունն իր հետ բերել էր 55 գոմեշ, 109 եգ, 68 կով, 63 հորթ, 6 ոչխար ու այծ, 16 ձի, 1 էշ: Վերաբնակների կազմում եղել են 9 ջուլիակ, 3 հյուսն, 2 բրդագործ, 1 վաճառական և 2 դերձակ<sup>10</sup>:

Հավատարիմ մնալով հայ առաքելական եկեղեցու դավանանքին, արժեքներին, ավանդույթներին ու արարողակարգերին՝ վերաբնակեցված հայերի կյանքում բազմաթիվ խնդիրների շարքում առաջնահերթ պետք է լինել նաև հոգևոր անկյուն ունենալու փափա-

<sup>1</sup> Վարդենիս գյուղը գտնվում է Ապարան քաղաքից 3 կմ հարավ-արևելք՝ Զասաղ գետի աջակողմյան Վարդենիս վտակի կանաչ ափին (տե՛ս Գալոբյան Թ. և այլք, Չայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Ե., 1998, էջ 782):

<sup>2</sup> Տիգրան Չայակի գրքում նշվում է, որ պատմական անունը եղել է Աղբյուրակ, սակայն հեղինակը օգտագործված աղբյուրը չի վկայակոչում (տե՛ս Գալոբյան Ս., Վարդենիս, Ե., 2009, էջ 7):

<sup>3</sup> Տե՛ս ԶԱԱ, ֆ. 207, գ. 60, գ. 17, թ. 10:

<sup>4</sup> Տե՛ս "Под стягом России", сборник архивных документов, сост. примеч. А. А. Сазонова, Г. Н. Герасимовой, О. А. Глушковой, С. Н. Н. Кустерева, М., Русская книга, 1992, с. 314-316, 320.

<sup>5</sup> Տե՛ս Գալոբյան Թ., Պատմական Չայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 148-149:

<sup>6</sup> Տե՛ս «Չայ գաղթաշխարհի պատմություն» (միջնադարից մինչև 1920թ.), Ե., 2003, էջ 225:

<sup>7</sup> Տե՛ս «Քրիստոնյա Չայաստան» հանրագիտարան, իմպ. Զ. Այվալյան, Ե., 2002, էջ 135:

<sup>8</sup> Տե՛ս Գալոբյան Թ., Պատմական Չայաստանի քաղաքները, էջ 148-149:

<sup>9</sup> Տե՛ս ԶԱԱ, ֆ. 90, գ. 1, գ. 84, թթ. 286-297:

<sup>10</sup> Տե՛ս Գալոբյան Ս., նշվ. աշխ., էջ 137: Տե՛ս նաև ԶԱԱ, ֆ. 90, գ. 1, գ. 84, թթ. 286-297:

գր: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Խոյն ունեցել է նաև Ս. Աստվածածին եկեղեցի: Մասնավորապես 1843 թ. Երևանի Հայոց վիճակային կոնսիստորիայի անդամների կողմից Էջմիածնի հայոց լուսավորչական Սինոդին ուղղված հայտարարությունում նշվում է, որ Գյուլլուջա գյուղի հասարակությունը դիմել է խնդրանքով, որ իրենց գյուղում Տեր Մինասի որդի Յովհաննես Տեր-Մինասյանին ձեռնադրեն քահանա: Հիշյալ փաստաթղթի համաձայն՝ Տեր Մինասը քահանա է ձեռնադրվել Պարսկաստանի Սիմեոն արքեպիսկոպոսի կողմից, իսկ Յովհաննեսը ծնվել է հոր քահանայության ժամանակ՝ 1815 թ. և մկրտվել է Խոյ գավառակի Ղարանի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում՝ Տեր Յովսեփ քահանայի կողմից, քավորությամբ՝ նույն գյուղի բնակիչ Ավետ Աղսևի<sup>1</sup>: Քանի որ Գյուլլուջա գյուղի վերաբնակների մեջ եր նաև Տեր Մինասը, ուստի քահանայի կարիք գյուղը սկզբնական շրջանում և հաջորդող տարիներին չէր ունեցել: Իսկ արդեն 1843 թ. գյուղի բնակչությունը դիմում է խնդրանքով՝ Տեր Մինասի որդուն ձեռնադրել քահանա: Ընդառաջելով գյուղի հասարակության խնդրանքին՝ 1844 թ. թույլատրվում է Յովհաննես Տեր-Մինասյանցին ձեռնադրել քահանա: 1844 թ. հունվարի 29-ին Ս. Գայանե եկեղեցում Սկրտիչ եպիսկոպոս Կարճիկյանի կողմից Յովհաննես Տեր-Մինասյանցը ձեռնադրվում<sup>2</sup>:

ՀԽՍՀ Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի ավագ գիտաշխատող Յ. Եղիազարյանը 1943 թ. Ապարանի շրջանում կատարած հնագիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփող զեկուցագրում նշում է, որ Գյուլլուջա գյուղի գյուղամեջի եկեղեցին հայտնի է «Աստվածածին» անունով, որ եկեղեցին կառուցվել է 19-րդ դ. վերջերին, սև տուֆի մաքուր տաշած քարերից, կրաշաղախով, տանիքը՝ փայտածածկ, հիմնված հին եկեղեցու հիմնապատերի վրա, իսկ շուրջը եղել են հին գերեզմաններ, որոնց բլուրի տապալանաքարերն էլ ջարդել և տարել էին<sup>3</sup>: Հիմք ընդունելով գյուղի ծերունիների պատմածները՝ Յ. Եղիազարյանը զեկույցում նշում է նաև, որ Գյուլլուջա գյուղի արևմտյան մասում հին եկեղեցու մնացորդներ են եղել, որի հետքերը սակայն իրենք չեն հայտնաբերել: Յ. Եղիազարյանի կողմից 1943 թ. դեկտեմբերի 25-ին կազմված ՀԽՍՀ Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի հաշվառման քարտում կրկին նշվում է գյուղի ծերունիների պատմած հին եկեղեցու ավերակների մասին, որը եղել է քարաշեն: Նշված է նաև, որ հետազոտական խմբի կողմից այդ վայրում ոչ մի հետք չի նկատվել<sup>4</sup>: Ակնհայտ է, որ Ս. Աստվածածին եկեղեցին նկարագրելիս՝ Յ. Եղիազարյանն այն շփոթել է գյուղամեջի մոտակայքում գտնվող Ս. Յակոբ կոչվող եկեղեցու հետ, որն իրոք կառուցվել է 19-րդ դ.՝ վերաբնակեցման ժամանակ. այն սև տուֆից է և կանգուն է մինչև օրս: Հայաստանի տեղանունների բառարանում ևս նշվում է, որ Վարդենիսի եկեղեցին կառուցվել է 19-րդ դարում, և, կրկին սխալմամբ, եկեղեցուն վերագրվում է «Ս. Աստվածածին» անունը<sup>5</sup>: Մինչև այժմ որևէ արխիվային փաստաթուղթ կամ արձանագրություն չի հայտնաբերվել, որի հիման վրա հնարավոր լիներ պնդել, որ Վարդենիս գյուղի գյուղամեջի մոտ գտնվող սև տուֆից կառուցված եկեղեցին ունեցել է «Ս. Աստվածածին» անվանումը: Փոխարենը Հայաստանի ազգային արխիվում պահպանվել են Գյուլլուջա գյուղի Ս. Յակոբ եկեղեցու 1853-1879 թթ.<sup>6</sup> և 1901-1918 թթ.<sup>7</sup> ծնունդների, մկրտության, պսակի, ննջեցյալների գրանցումները պարունակող բնօրինակ, ձեռագիր չափաբերական մատյանները: Իսահակ քահանա Ղազարյանի կողմից Ապարանի Բարեկարգ, Գուլլուջա գյուղի քահանա Տեր Յովհաննես Տեր-Մինասյանին գյուղի ծնունդները,

<sup>1</sup> ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1503, թ. 1 և շրջ., 8: Քանի որ Արևելյան Հայաստանը մտել էր Ռուսաստանի կապ, հայերի ազգանունները սկսել էին գրել ռուսական վերջավորությամբ: Մեկ այլ փաստաթղթում Տեր Յովհաննեսի կնքանունը Ալետի ազգանունը հայկական ձևով՝ «Աղվեան» է գրված (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1503, թ. 2 և շրջ.):

<sup>2</sup> ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1503, թ. 4 և շրջ., 10:

<sup>3</sup> ՏԵՍ նույն տեղում, ֆ. 1063, ց. 1, գ. 1361, թ. 68:

<sup>4</sup> ՏԵՍ նույն տեղում, գ. 11452, թ. 41-42:

<sup>5</sup> «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 4, էջ 782:

<sup>6</sup> ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 794:

<sup>7</sup> ՏԵՍ նույն տեղում, ց. 5, գ. 261:

պասկները, և ննջեցյալներին 1853 թվականից սկսած գրանցելու համար տրված չափաբերական մատյանում եկեղեցին նշված է Ս. Յակոբ անունով<sup>1</sup>: Քանի որ մեր ծեռքի տակ ունենք Ս. Յակոբ եկեղեցու 1853 թ. չափաբերական մատյանը և եթե հաշվի առնենք, որ գյուղը վերաբնակեցվել էր 1828 թվականից, ապա անհնար էր, որ երկուսուկես տասնամյակ հետո փոխվեր եկեղեցու անունը: Բացի այդ՝ արխիվային մեկ այլ փաստաթղթից տեղեկանում ենք, որ Ս. Յակոբ եկեղեցին իրենց միջոցներով կառուցել են գյուղի բնակիչները՝ վերաբնակության ժամանակ: Այսպես Ս. Յակոբ եկեղեցին վերանորոգելու նպատակով 1884 թ. հունիսի 22-ին Ապարանի Գյուլլուջա գյուղի բնակիչները խնդրագիր էին ներկայացրել Ապարանի գործակալ Եղիշե վարդապետ Ամատունուն, որտեղ ասվում է. «Սուրբ Յակոբ եկեղեցին գեղջս մեր գույով շինեալ 'ի ժամանակ վերաբնակելոյ մեր աստ 'ի Գիլլուջայ, արդէն քայքայեալ և խախտեալ 'ի հիմանց, դժուարանան կառավարիլ 'ի նմայ հասարակութիւնք մեր...»<sup>2</sup>:

Վարդենիս գյուղի բնակիչների հետ մեր զրոյցները ցույց տվեցին, որ գյուղում, ըստ իրենց նախնիների հիշողությունների, եղել են հին եկեղեցու հետքեր, որի տեղանքը գյուղացիները մատնանշեցին Մնացական Մանուկյանի տան տեղում: Կարելի է ենթադրել, որ Ս. Աստվածածին եկեղեցին հենց այդ՝ ավելի վաղ ժամանակներում գոյություն ունեցած եկեղեցին է եղել, որի հետքերը սակայն ներկայումս չեն պահպանվել: Ի դեպ, նշված վայրը Ս. Յակոբ եկեղեցուց մոտ 150-200 մ հեռավորության վրա է գտնվում:

Ինչպես արդեն նշել ենք, Գյուլլուջա գյուղի հասարակությունը 1884 թ. դիմել էր Ս. Յակոբ եկեղեցին վերանորոգելու խնդրանքով: Էջմիածնի հայոց լուսավորչական սինոդին Երևանի հայոց Վիճակային կոնսիստորիայի անդամների կողմից 1889 թ. մայիսի 20-ին ուղղված հայտարարությունից տեղեկանում ենք, որ գյուղը եկեղեցու կառուցման համար ուներ 500 ռուբլի դրամագլուխ: Եկեղեցու կառուցման համար ընտրվել էին հոգաբարձուներ Նահապետ Միրզայանց<sup>3</sup>, Մայիլ Մուրադյանը, Գալուստ Մարտիրոսյանը և Յամագասպ քահանա Տեր-Յովհաննիսյանը: Նոր եկեղեցին, ինչպես նշված է փաստաթղթում, կառուցվելու էր հին շինության վրա. «Յիշեալ եկեղեցին ունի զհինգ հարիւր ռուբլի դրամագլուխ և շինութեան ի վերայ հնոյ հիման պարտի լինիլ երկայնութեամբ ինն սաժենից<sup>4</sup>, լայնութեամբ չորս և բարձրութեամբ երկուց: Արտաքուստ սրբատաշ քարամբք, սեղանն հոյակապ<sup>5</sup>: Եկեղեցին նախնական 1267 ռուբլի դրամագլուխ էր ներկայացրել, բայց գումարները, որպես պարտամուրհակ, գտնվում էին գյուղի հասարակության մոտ, որը չբավորության մեջ էր և հնարավոր էր եղել նրանցից հավաքել միայն 500 ռուբլին, որն ամբողջապես ծախսվել էր եկեղեցու շինարարության վրա: Ապարանի Վարդենիս գյուղի Ս. Յակոբ եկեղեցու վերակառուցման աշխատանքներն ընթացել են մինչև 1890 թ.<sup>6</sup>: Յարկ է նշել, որ խորհրդային արժեզրեզման տարիներին եկեղեցին չի գործել և ծառայել է որպես պահեստ: 2012 թ. այն վերածովել է և դարձել գործող եկեղեցի՝ Տեր Մուշե Վահանյանի քահանայությամբ:

Այսպիսով Ապարանի Վարդենիս գյուղի Ս. Յակոբ եկեղեցին, որին սխալմամբ վերագրվել է «Ս. Աստվածածին» անունը, կառուցվել է գյուղի վերաբնակնակեցման ժամանակ՝ 19-րդ դ. առաջին կեսին: Յայաստանի ազգային արխիվում պահվում են Ս. Յակոբ եկեղեցու 1853 թ. չափաբերական մատյանները, որտեղ հստակ նշված է եկեղեցու անվանումը: Ըստ այդմ կարելի է ենթադրել, որ գյուղի հին եկեղեցին Ս. Աստվածածին եկեղեցին է եղել, որն ըստ վարդենիցիների՝ Մնացական Մանուկյանի տան տեղանքում է հիշատակվել և որի մասին շփոթ առաջացնող փաստերով՝ իր զեկույցում նշել է Նաև Յ. Եղիազարյանը:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 47, ց. 1, գ. 794, թ. 1:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ. 56, ց. 1, գ. 7838, թ. 2 և շրջ.:

<sup>3</sup> Սուրբ Յակոբ եկեղեցու վերանորոգման հոգաբարձու Նահապետ Միրզայանը Քեռու զվհավորած 4-րդ գնդի կամավոր, 1918 թ. Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից Արշակ Մակարյանի պապն է:

<sup>4</sup> Սաժենը համապատասխանել է 3 արշինի կամ 213,36 սմ: Տե՛ս Յայկական սովետական հանրագիտարան, հ. 10, էջ 114:

<sup>5</sup> Տե՛ս ՅԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7838, թ. 7:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, թթ. 9, 10 և շրջ.:

**Лилит Макарян, К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.** Село Варденис Апарана было переселено в 1828 году после перехода Восточной Армении к России по Туркменчайскому договору. Переселенцы в основном были из Хойа: 36 семей, а также из Западной Армении: 9 семей из Баязета и 1 семья из Муша. В общей сложности в это время в село переселились 46 семей, 248 человек.

В первой половине XIX века переселенцы основали в селе Варденис церковь под названием Сурб Акоп (св. Яков), которой многие авторы ошибочно приписали имя Сурб Аствацацин (св. Богородица).

В Национальном архиве Армении были обнаружены метрические журналы церкви Сурб Акопа, содержащие данные о рождении, венчании и смерти 1853г. По свидетельству варденисцев, согласно воспоминаниям их предков, село имело более древнюю церковь, которая находилась на территории дома Мнацакана Манукяна. В целом можно предположить, что именно это и была церковь Сурб Аствацацин (св. Богородицы), о которой в своем докладе упоминал Г. Егиазарян, несмотря на факты, порождающие сомнения.

**Ключевые слова:** Хой, депортация, Варденис, Сурб Акоп (св. Яков), Сурб Аствацацин (св.Богородица), перепись населения, Тер Оганес Тер-Минасян.

**Lilit Makaryan, ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.** Vardenis village of Aparan was resettled in 1828 after the transfer of Eastern Armenia to Russia under the Treaty of Turkmenchay. The settlers were mainly from Khoy - 36 families, as well as from Western Armenia - 9 families from Bayazet and 1 family from Mush. A total of 46 families, 248 people, were resettled in the village at that time. In the first half of the 19th century a church named St. Hakob was founded in the village of Vardenis, which was mistakenly named "St. Astvatsatsin" by some authors. Birth, wedding and death records of 1853 of St. Hakob church was found in the National Archive of Armenia. According to the people's testimony of Vardenis and their ancestors' recollections, the village had also an older church, the traces of which were in the territory of Mnatsakan Manukyan's house. Based on that, it can be assumed that the latter is St. Astvatsatsin church that H. Yeghiazaryan mentioned in his report despite some confusing facts.

**Key words:** Khoy, deportation, Vardenis, St. Hakob, St. Astvatsatsin, census, Ter Hovhannes Ter-Minasyan.